Մովսես Խորենացու կենսագրությունից մեզ շատ քիչ տեղեկություններ են հասել: Հայտնի չեն անգամ նրա ծննդյան և մահվան ճշգրիտ տարիները: Չնայած դրան՝ բոլոր տվյալներով էլ երևում է, որ նա բավականին երկար կյանք է ապրել: Ծնվել է 5-րդ դարում, Տարոն գավառի Խորնի կամ Խորոն գյուղում, մեկ այլ վարկածով՝ Սյունիքի Հաբանդ գավառի Խորեա(ն) գյուղում, որտեղից էլ եկել է անունը:Մովսես Խորենացին մեծարվել է <<տիեզերահռչակ>>, <<քերթողահայր>>, <<պատմահայր>> բնութագրումներով: Նա որպես վերաբերական, հավաստի ու վստահելի պատմիչ շարունակում է զբաղեցնել հայ և համաշխարհային գիտական միտքը: Նա գրել է հայ ժողովրդի քննական ամբողջական պատմությունը: Ծնվել է չորս հարյուր տասից չորս հարյուր տասնհինգ թվականների միջակայքում Խորեան կամ Խորենք գյուղում:





Նա Մեսրոպ Մաշտոցի աշակերտներից էր, վերջինիս ցուցումով էլ ուղևորվում է Ալեքսանդրիա՝հունարեն սովորելու և <<իսկական ճեմարանում կատարելագործվելու>> համար: Չորս հարյուր քառասուներկու թվականին վերադառնում է հայրենիք: Մահացել էին իր ուսուցիչներ Սահակ Պարթևն ու Մեսրոպ Մաշտոցը: Խորենացին բավականին մեծ ցավ է ապրում: Այդ ժամանակ նրա և նրա հետ վերադարձածներին վատ են ընդունում: Իրեն և ժողովրդին էլ պատուհասած դառնությունների մասին նա գրի է առնում <<Հայոց պատմություն>>-ը եզրափակող <<Ողբ>> գլխի մեջ:



Միջնադարյան ձեռագրերը Մովսես Խորենացուն են վերագրում ինքնուրույն և թարգմանական մի շարք երկեր՝ ճառեր, թղթեր, ներբողյաններ, հոգևոր երգեր՝ շարականներ, քերականական, փիլիսոփայական աշխատանքներ, թարգմանություններ: Նրա <<Հայոց պատմությունն>> ունի մեծ նշանակություն և գիտական մեծ արժեք, այն հայ ժողովրդի ծննդաբանության, ազգաբանության, գոյաբանության և մշակութաբանության ամենամեծ հուշարձանն է: Այն շուրջ հազար չորս հարյուր տարի եղել է դասագիրք , օրինակ և չափանիշ՝ միջնադարյան հայ բոլոր պատմագիրների համար: Թարգմանվել է ռուսերեն, ֆրանսերեն, անգլերեն, իտալերեն, վրացերեն, հունգարերեն, պարսկերեն, արաբերեն, գերմաներեն, հատվածաբար՝նաև այլ լեզուներով:

Այս աշխատության մեջ կան նաև որոշ կեսագրական տեղեկություններ Խորենցու կյանքից, որոնք լրացվում են որոշակի հիշատակություններով ու ավանդույթներով: Այդ ավանդույթները, որոնք ամենայն հավանականությամբ հիմված են պատմական հիմքերի վրա Խորենացուն համարում են նաև նշանավոր երգիչ, երաժիշտ, բանաստեղծ: Այս տեսանկյունից հատկապես աչքի է ընկում «Յաղագս սրբոց վարդապետացն հայոց Մովսէսի և Դաւթի» գրվածքի մի պերճախոս հատվածը: Ինչպես հայտնի է Հայաստան վերադառնալուց հետո պատմահայրը վարում է զրկանքներով լի կյանք, ինչպես նաև նա հնարավոր ամեն ինչ անում է իր ինքնությունը թաքցնելու համար, նրան շատ անգամներ փնտրում է Գյուտ Արահեզացի կաթողիկոսը, սակայն ապարդյուն, նա նրան չի գտնում: